

2024թ. երկրորդ եռամսյակի

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի

կողմից կատարված աշխատանքների

Հաշվետվություն

1. Պարկի տարածքում գիտական հետազոտություններ.

2024թ. երկրորդ եռամսյակում հիդրոկենսաբանի կողմից ուսումնասիրվել է Սևանա լիճ թափվող Լիճք, Գավառագետ, Ձկնագետ և Դրախտիկ գետերի տարբեր հատվածների ջրերում 20°C և 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մանրէների թվաքանակը և կոլի-ինդեքսը (աղիքային ցուպիկների խմբի մանրէների քանակը 1լ. ջրում): Ջուգահեռ նաև ուսումնասիրվել է ջրում լուծված թթվածնի և օրգանական նյութի պարունակությունը՝ ըստ պերմանգանատային օքսիդացման արժեքի: 20°C-ում և 37°C-ում աճեցված սապրոֆիտ մանրէների հարաբերակցության արժեքի հիման վրա որոշվել է գետի ինքնամաքման ինտենսիվությունը:

Մանրէաբանական հետազոտությունների արդյունքներից ելնելով՝ կատարվել է գետերի ջրերի որակի գնահատում:

Գետ Լիճք

Ակունք.- հիմնականում ստորերկրյա ջրերով սնվող գյուղամիջի խոշոր աղբյուրի ելքից մոտ 20մ. ներքև վերցված փորձանմուշում՝ ինչպես նախորդ տարիներին, հայտնաբերվել են միայն 20°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մանրէներ՝ շատ քիչ քանակով՝ 10 ԳԱՄ/մլ: Սապրոֆիտ մեզոֆիլ մանրէներ (37°C-ում 24 ժամ տևողությամբ աճեցված) և աղիքային ցուպիկներ չեն հայտնաբերվել (աղ.1): Դիտակետի ջրերում լուծված թթվածնի պարունակությունը կազմել է 8.15 մգO₂/դմ³, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ 0.56 մգO/դմ³:

Աղյուսակ 1

Սապրոֆիտ մանրէների քանակը, կոլի-ինդեքսը, լուծված թթվածնի պարունակությունը և պերմանգանատային օքսիդացման արժեքը Լիճք գետի տարբեր հատվածների ջրերում

Դիտակետ	Սապրոֆիտ մանրէների քանակ, ԳԱՄ/մլ		Կոլի-ինդեքս, հզ. ԳԱՄ/լ	Լուծված թթվածին, մգO ₂ /դմ ³ ,	Պերմանգանատային օքսիդացում, մգO/դմ ³
	20°C	37°C			
Ակունք	10	0	Չի հայտնաբերվել ԳԱՄ	8.15	0.56
Գետաբերան	3450	240	28	9.6	1.52

Գետաբերան.- գետը՝ հոսելով համանուն գյուղի միջով, աղտոտվում է ֆեկալ կենցաղային և ձկնաբուծական տնտեսությունների հոսքաջրերով, ինչի արդյունքում ակունքի համեմատ արձանագրվել է մանրէների թվաքանակի աճ: Այսպես, 20°C և 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մանրէների քանակը համապատասխանաբար կազմել է 3450 ԳԱՄ/մլ և 240 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 28 հզ.ԳԱՄ/լ, որը ՍԹԿ-ն գերազանցել է 5.6 անգամ: Մանրէների միջոցով կատարվող ինքնամաքման արժեքը կազմել է 14.3: Բարձրացել է նաև պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ կազմելով 1.52 մգO/դմ³: Ջրում լուծված թթվածնի պարունակությունը եղել է 9.6 մգO₂/դմ³:

Համաձայն ՀՀ առողջապահության նախարարության՝ 2018թ. N 09 հրամանի՝ «Ռեկրեացիոն նպատակով ջրօգտագործման վայրերում մակերևութային ջրային ռեսուրսների ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջների» N 2.1.5.001- 18 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին որոշման, ընդհանուր կոլիֆորմ մանրէների (37°C-ում աճեցված աղիքային ցուպիկների խմբի մանրէներ) թվաքանակը չպետք է գերազանցի 500 ԳԱՄ/100մլ. արժեքը: Նշված արժեքը գետաբերանի հատվածում գերազանցել է ՍԹԿ-ն (սահմանային թույլատրելի կոնցենտրացիան) 8 անգամ:

Գետ Գավառագետ

Վերին հոսանք- գետի ակունք տանող ճանապարհը ձյունածածկ լինելու պատճառով փորձանմուշը վերցվել է Գեղարքունիք գյուղի սկզբնամասի հատվածից, ուր թափվում են ափամերձ տների ֆեկալ-կենցաղային հոսքաջրերը՝ ենթարկելով այն աղտոտման: Դրանով պայմանավորված՝ դիտակետի ջրերում արձանագրվել է մանրէներով՝ հատկապես մեզոֆիլ սապրոֆիտներով և աղիքային ցուպիկներով աղտոտվածության բարձր մակարդակ: Այսպես, 20°C-ում և 37°C-ում աճեցված սապրոֆիտ մանրէների քանակը համապատասխանաբար կազմել է 2250 ԳԱՄ/մլ և 540 ԳԱՄ/մլ, իսկ կոլի ինդեքսը՝ 10 հզ.ԳԱՄ/լ, որը ՍԹԿ-ն գերազանցել է 2 անգամ: Մանրէների միջոցով կատարվող ինքնամաքման արժեքը կազմել է 4.1: Ջրում լուծված թթվածնի պարունակությունը եղել է 9.9 մգO₂/դմ³, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ 5.28 մգO/դմ³ (աղ.2):

Աղյուսակ 2

Սապրոֆիտ մանրէների քանակը, կոլի-ինդեքսը, ջրում լուծված թթվածնի պարունակությունը և պերմանգանատային օքսիդացման արժեքը Գավառագետի տարբեր հատվածների ջրերում

Դիտակետ	Սապրոֆիտ մանրէների քանակ, ԳԱՄ/մլ		Կոլի-ինդեքս, հզ. ԳԱՄ/լ	Լուծված թթվածին, մգO ₂ /դմ ³	Պերմանգանատային օքսիդացում, մգO/դմ ³
	20 °C	37 °C			
Վերին հոսանք	2250	540	10	9.9	5.28
Նորատուս գյուղից վերև՝ ավտոմայրուղու կամրջի հարևանությամբ	3500	480	30	10.4	2.72
Գետաբերան	4250	490	70	10.8	3.52

Գետը, հոսելով մի շարք գյուղերի և Գավառ քաղաքի միջով՝ աղտոտվում է ֆեկալ-կենցաղային հոսքաջրերով, ինչի արդյունքում՝ նախորդ դիտակետի համեմատ՝ ավելացել է 20°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մանրէների քանակը և կոլի-ինդեքսի

արժեքը, իսկ մեզոֆիլ սապրոֆիտների քանակը գրեթե չի փոփոխվել: Այսպես, Այսպես, 20°C և 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մարէների քանակը համապատասխանաբար կազմել է 3500 ԳԱՄ/մլ և 480 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 30 հզ.ԳԱՄ/լ, որը ՍԹԿ-ն գերազանցել է 6 անգամ: Ակտիվացել է ինքնամաքրման ինտեսիվությունը (7.2): Ջրում լուծված թթվածնի պարունակությունը գրեթե չի փոփոխվել, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը նվազել է՝ կազմելով 2.72 մգO₂/դմ³:

Գետաբերան- գետը, հոսելով Նորատուս գյուղի միջով, աղտոտվում է ֆեկալ-կենցաղային հոսքաջրերով, ինչի արդյունքում՝ նախորդ դիտակետի համեմատ արձանագրվել է մանրէների թվաքանակի աճ: Այսպես, 20°C և 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մանրէների քանակը կազմել է 4250 ԳԱՄ/մլ և 490 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 70 հզ.ԳԱՄ/լ, որը ՍԹԿ-ն գերազանցել է 14 անգամ: Ակտիվացել է ինքնամաքրման գործընթացը (8.7): Բարձրացել է նաև պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ կազմելով 3.52 մգO₂/դմ³: Ջրում լուծված թթվածնի պարունակությունը եղել է 10.8 մգO₂/դմ³:

Գետ Ձկնագետ

Վերին հոսանք – կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ գետի վերին հոսանքի ջրերում 20°C և 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մանրէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 900 ԳԱՄ/մլ և 28 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 0.2 հզ.ԳԱՄ/լ: Մանրէների միջոցով կատարվող ինքնամաքրման արժեքը կազմել է 32: Դիտակետի ջրերում պերմանգանատային օքսիդացման արժեքը եղել է 3.5 մգO₂/դմ³ (աղ.3):

Աղյուսակ 3

Սապրոֆիտ մանրէների քանակը, կոլի-ինդեքսը, լուծված թթվածնի պարունակությունը և պերմանգանատային օքսիդացման արժեքը Ձկնագետի տարբեր հատվածների ջրերում

Դիտակետ	Սապրոֆիտ մանրէների քանակ, ԳԱՄ/մլ		Կոլի-ինդեքս, հզ ԳԱՄ/լ	Լուծված թթվածին, մգO ₂ /դմ ³ ,	Պերմանգանատային օքսիդացում, մգO ₂ /դմ ³
	20°C	37°C			
Վերին հոսանք	900	28	0.2	-	3.5
Սեմյոնովկա գյուղի անասնապահական հոսքաջրերի մուտքից մոտ 50մ ներքև	6600	320	18	8.7	4.5
Գետաբերան	9500	740	38	9.4	4.6

Սեմյոնովկա գյուղի անասնապահական հոսքաջրերի մուտքից՝ մոտ 50մ ներքև- հոսքաջրերը, լցվելով գետ, այն ենթարկում են աղտոտման, ինչի արդյունքում վերին հոսանքի համեմատ արձանագրվել է մանրէների թվաքանակի աճ: Այսպես, 20°C և 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մանրէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 6600 ԳԱՄ/մլ և 320 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 18հզ.ԳԱՄ/լ, որը ՍԹԿ-ն գերազանցել է 3.6 անգամ: Նվազել է ինքնամաքրման ինտեսիվությունը: Բարձրացել է

պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ կազմելով 4.5 մգO₂/դմ³: Դիտակետում լուծված թթվածնի պարունակությունը եղել է 8.7 մգO₂/դմ³:

Գետաբերան- այս հատվածին հարող տարածքը բնութագրվում է ակտիվ տնտեսական գործունեությամբ, որով էլ պայմանավորված՝ նախորդ դիտակետի համեմատ՝ արձանագրվել է մանրէների թվաքանակի ավելացում: Այսպես, 20°C-ում և 37°C-ում աճեցված սապրոֆիտ մանրէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 9500 ԳԱՄ/մլ և 740 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 38 հգ.ԳԱՄ/լ, որը << առողջապահության նախարարության կողմից սահմանված նորմը գերազանցել է 7.6 անգամ: Մանրէների միջոցով իրականացվող ինքնամաքման ինտենսիվությունը նվազել է՝ կազմելով 12.8: Դիտակետի ջրերում պերմանգանատային օքսիդացման արժեքը գրեթե չի փոփոխվել, իսկ լուծված թթվածնի պարունակությունը որոշ չափով բարձրացել է:

Գետ Դրախտիկ

Մինչ Դրախտիկ գյուղ մտնող հատված- կատարված հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ գետի այս հատվածի դիտակետի ջրերում 20° C և 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մանրէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 3000 ԳԱՄ/մլ և 320 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 2.5 հգ. ԳԱՄ/լ, որը չի գերազանցում ՍԹԿ-ն: Մանրէների միջոցով կատարվող ինքնամաքման արժեքը կազմել է մոտ 10: Զրում լուծված թթվածնի պարունակությունը եղել է 9.6 մգO₂/դմ³, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ 5.2 մգO₂/դմ³ (աղ.4):

Աղյուսակ 4

Սապրոֆիտ մանրէների քանակը, կոլի-ինդեքսը, լուծված թթվածնի պարունակությունը և պերմանգանատային օքսիդացման արժեքը Դրախտիկ գետի տարբեր հատվածների ջրերում

Դիտակետ	Սապրոֆիտ մանրէների քանակ, ԳԱՄ/մլ		Կոլի-ինդեքս, հգ ԳԱՄ/լ	Լուծված թթվածին, մգO ₂ /դմ ³ ,	Պերմանգանատային օքսիդացում, մգO/դմ ³
	20° C	37° C			
Վերին հոսանք	3000	320	2.5	9.6	5.2
Գետաբերան	7000	900	30	9.5	5.4

Գետաբերան- գետը, հոսելով համանուն գյուղի միջով, աղտոտվում է ֆեկալ-կենցաղային և անասնապահական հոսքաջրերով, որոնց հետևանքով վերցված փորձանմուշում՝ նախորդ դիտակետի համեմատ՝ արձանագրվել է մանրէների թվաքանակի ավելացում՝ հատկապես աղիքային ցուպիկների: Այսպես, 20°C և 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մանրէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 7000 ԳԱՄ/մլ և 900 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 30 հգ. ԳԱՄ/լ, որը ՍԹԿ-ն գերազանցել է 6 անգամ: Նվազել է ինքնամաքման ինտենսիվությունը (7.7): Դիտակետի ջրերում լուծված

թթվածնի պարունակությունը գրեթե չի փոփոխվել, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը որոշ չափով բարձրացել է:

Այսպիսով, ուսումնասիրությունների արդյունքներից պարզ է դարձել, որ գետերը համայնքների տարածքներով հոսելիս ենթարկվում են ֆեկալ-կենցաղային հոսքաջրերով ինտենսիվ աղտոտման: Մանրէներով առավել աղտոտված են գետերի գետաբերանների ջրերը: Սապրոֆիտ մանրէների միջոցով կատարվող ինքնամաքման ինտենսիվությունը Ձկնագետ, Լիճք և Դրախտիկ գետերում աղտոտվածության մակարդակի բարձրացմանը զուգահեռ, ակունքից դեպի գետաբերան նվազել է (32-7.7), իսկ Գավառագետում՝ ակտիվացել (4.1-8.6): Պերմանգանատային օքսիդացման արժեքների փոփոխությունները հիմնականում համադրվել են մանրէների քանակական փոփոխությունների հետ:

Հետազոտված գետերի համայնքներից դուրս հոսող և գետաբերանի հատվածներում կոլիֆորմ բակտերիաները ռեկրեացիոն նպատակով օգտագործվող ջրերի՝ ՀՀ առողջապահության նախարարության սահմանված չափաքանակը գերազանցել են 2-14 անգամ:

Համաձայն Վ. Դ. Ռոմանենկոյի՝ (Романенко и др., 1990) մակերևութային ջրերի էկոլոգասանիտարական գնահատման, ըստ կոլի-ինդեքսի արժեքի, Լիճք գետի վերին հոսանքի ջրերը գնահատվել են որպես «չափազանց մաքուր», Ձկնագետը՝ «շատ մաքուր», Դրախտիկը՝ «բավարար մաքուր», իսկ Գավառագետը՝ «թույլ աղտոտված»: Գավառագետի գետաբերանի հատվածում ջուրը դասվել է «ուժեղ աղտոտված», իսկ Լիճքի, Դրախտիկի և Ձկնագետի գետաբերանի ջրերը՝ «չափավոր աղտոտված»:

Ըստ 20°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մանրէների թվաքանակի՝ Գավառագետ, Ձկնագետ և Լիճք գետերի վերին հոսանքների ջրերը դասվել են «չափազանց մաքուր-բավարար մաքուր», իսկ Դրախտիկ գետը՝ «թույլ աղտոտված» ջրերի կարգի: Գետաբերանի հատվածներում Գավառագետ և Լիճք գետերի ջրերը դասվել են «թույլ աղտոտված», Դրախտիկը՝ «չափավոր աղտոտված», Ձկնագետը՝ «ուժեղ աղտոտված» ջրերի կարգի:

Համաձայն Ժ.Պ. Ամբրազենի (Амбразене, 1974) դասակարգման՝ ըստ 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մանրէների թվաքանակի՝ Դրախտիկ, Ձկնագետ և Լիճք գետերի վերին հոսանքների ջրերը դասվել են «մաքուր», իսկ Գավառագետը՝ «թույլ աղտոտված» ջրերի դասին, Լիճք գետի գետաբերանի հատվածում ջուրը դասվել է «մաքուր», Դրախտիկ, Գավառագետ և Ձկնագետ գետերի գետաբերանի հատվածներում՝ «թույլ աղտոտված» ջրերի դասին:

Գլխավոր ձկնաբան-ձկնաբույծի կողմից երկրորդ եռամսյակում Սևանա լճում իրականացվել է խեցգետնային համակցության էկոլոգիական հետազոտություններ: Խեցգետնի պոպուլացիայի չափատարիքային վերարտադրման, սեռական կառուցվածքի, հիդրոբիոնտների բեղունության, աճի առանձնահատկությունների հետազոտման նպատակով, խեցգետնի թակարդներով փորձանմուշներ են ձեռք բերվել Սևանա լճի տարբեր հատվածներից՝ փոքր Սևանի Շորժա, թերակղզի, Ծովագյուղ, մեծ Սևանի՝ Նորատուս Մարտունի, Կարճաղբյուր համայնքների ջրային տարածքներից: Խեցգետնի վերարտադրման ցուցանիշների գնահատման համար հետազոտվել է 120 էգ խեցգետին: Ուսումնասիրվել է մոտ՝ 908 առանձնյակ:

Սևանա լճում խեցգետնի ձևաչափական ցուցանիշների հետազոտությունները ցույց են տվել, որ երկրորդ եռամսյակում որսաբաժնում խեցգետինների միջին երկարությունը փոքր Սևանում համապատասխանաբար եղել է՝ 10.0սմ-ից – 10.2սմ, կշիռը՝ 27.1գ-ից – 28.2գ: Մեծ Սևանում՝ 10.1սմ-ից -10.3սմ, կշիռը՝ 28.2գ-ից -30.3գ:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում խեցգետինների միջին բեղունությունը կազմել է 226 ձկնկիթ: Բեղմնավորված ձվի միջին կշիռը եղել է 11.2մգ: Էգերի չափերը տատանվել են 8.0սմ-ից -13.4սմ: Զրի ջերմաստիճանը օրվա տարբեր ժամերի և լճի տարբեր խորության գոտիներում տատանվել են 6.51°C-13.9°C սահմաններում:

Խեցգետնի պոպուլյացիայի սեռական կառուցվածքը լճի խորության մեծացման զուգընթաց փոփոխությունների է ենթարկվել: Էգերի կուտակումներ է առաջացել լճի ափամերձ գոտում՝ մինչև 2-4մ: Նրանց թվաքանակը նվազում է 8-10 մետրից սկսած, իսկ արունների մոտ թվաքանակը սկսում է կրճատվել աստիճանաբար: Կենդանիների թվաքանակի կրճատվելը հավանաբար կապված է գրունտի փոփոխության հետ: Մեծ խորություններում գերակշռում է փափուկ տիղմը, որը խեցգետնի համար նախընտրելի բիոտոպ չի հանդիսանում:

Տարիքային խմբերը կազմել են 3-5 տարեկան խեցգետինները: Խորությունների ընտրությունը կատարվել է հաշվի առնելով խեցգետնի տարածվածության սահմանները:

Ուսումնասիրության արդյունքներից ելնելով կարել է եզրակացնել, որ վերարտադրման և որսաչափերի ցուցանիշների համաձայն պոպուլյացիան գտնվում է բավարար վիճակում:

Սիգ- երկրորդ եռամսյակում Սևանա լճում իրականացվել է սիգի պոպուլյացիոն ու կենսաբանական ցուցանիշների, նրանց գիրացող վտառի ուսումնասիրություն՝ գծային և քառային աճ, չափատարիքային կազմ, սննդառություն: Ուսումնասիրվող ժամանակահատվածում փորձանմուշ են հանդիսացել 40մմ և ավել խորշեր ունեցող դնովի ցանցերով որսված սիգ ձկնատեսակի առանձնյակները:

Ապրիլ-հունիս ամիսներին սիգի գիրացող վտառի ուսումնասիրման համար՝ Զիլ Արծվանիստ համայնքների ջրային տարածքներից որսված սիգ տեսակի ձկների երկարությունը տատանվել է 31.4սմ-ից - 32.0սմ, քաշը՝ 397.3գ-ից - 415.3գ: Բտվածության գործակիցը՝ $F=1.24-1.30$, $K=1.15-1.19$: Ձկների սեռական արգասիքները գտնվել են հասունացման երրորդ փուլում: Հետազոտված ձկների 30%-ը կազմել են արու, 70%-ը՝ էգ առանձնյակները:

Մայիս ամսին լճից որսվել և վերլուծության է ենթարկվել սիգի 22 առանձնյակ: Հետազոտված ձկները եղել են մեկ և երկու տարեկան, որոնց միջին երկարությունը կազմել է՝ 32.6սմ, միջին քաշը՝ 400.0գրամ: Բտվածության միջին գործակիցը՝ $F=1.27$, $K=1.16$: Ձկների սեռական արգասիքները գտնվել են հասունացման երրորդ փուլում (փոքր Սևան, Ծովազարդ):

Սիգի սննդառության առանձնահատկությունների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կերի հիմնական բաղադրիչ են կազմել թիոտանի խեցգետնակերպերը, կողալողերը, զոոպլանկտոնի և խիրոնոմիդների խառնուրդները:

Գարնանը՝ փոքր Սևանում սիգի հիմնական զանգվածը տեղաբաշխվել է 20-30մ խորություններում, նմանատիպ փոփոխություններ են նկատվել նաև մեծ Սևանում: Սիգի հիմնական մասը տեղաբաշխվել է լճի 20մ մինչև հատակ ընկած տարածքում: Ուսումնասիրվող ժամանակահատվածում ջրի ջերմաստիճանը մեծ Սևանում տատանվել է 8.7°C-ից -12.1°C, փոքր Սևանում՝ 8.2°C-ից - 11.9°C:

Կարաս - 2024թ. երկրորդ եռամսյակում Սևանա լճում ուսումնասիրվել է կարասի կենսաբանական վիճակը (վերարտադրման առանձնահատկությունները, պոպուլյացիայի, չափատարիքային սեռական կառուցվածքները, բազմացման ժամանակահատվածը):

Փոքր Սևանի մերձափնյա հատվածներում, հատկապես գարնանը ուսումնասիրվող ձկների միջին քաշը դնովի ցանցերում կազմել է՝ 197.8գ, միջին երկարությունը՝ 18.1սմ, բտվածության միջին գործակիցը՝ $F=3.98$, $K=3.09$ (փոքր Սևան, Լճաշեն): Մեծ Սևանում

Արտանիշի ջրային տարածքում կարասի միջին երկարությունը՝ 18.7սմ, միջին քաշը՝ 193.1 գրամ, բտվածության ցուցանիշը՝ $F=3.42$, $K=2.75$: Ուսումնասիրվող առանձնյակների տարիքային կազմը ներկայացված է՝ 2-4 տարեկան ձկներով:

Կարասի պոպուլյացիայի հետազոտման համար փորձանմուշներ ձեռք են բերվել մեծ Սևանի Ծովակի ջրային տարածքից, դնովի ցանցերով, որոնց խորշերի մեծությունը տատանվել է 40x40մմ և 45x45մմ սահմաններում: Ուսումնասիրվող կարաս տեսակի ձկան միջին քաշը կազմել է՝ 167.4գ, միջին երկարությունը՝ 17.2սմ: Բտվածության միջին ցուցանիշը՝ $F=3.61$, $K=2.94$: Ձկան ուսումնասիրությունը իրականացվել է 5-9մ խորությունների վրա, երբ ջրի ջերմաստիճանը տատանվում էր 7.1°C-13.9°C սահմաններում:

Կարասի կերի հիմնական բաղադրիչներն են կազմել դիատոմային կանաչ թելանման ջրիմուռները, խիրոնոմիդի թրթուրները: Կարասի կենսաբանական ցուցանիշների համեմատությունը վերջին տարիների ցուցանիշների հետ ցույց է տվել, որ միևնույն տարիքի ձկների մոտ բտվածության գործակիցը ըստ ֆուլտոնի և ըստ Կլարկի հետազոտված ժամանակահատվածում մնում է գործնականորեն անփոփոխ, ինչը վկայում է լճում համեմատաբար կայուն կերային պայմանների առկայության մասին:

Ձկնաբուծություն - Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման հիմնադրամի կողմից Սևանա լճում «Ամառային իշխան» ենթատեսակի պաշարների վերականգնման նպատակով 2024թ. մայիսի 22-ին «Սևանի իշխան» ՓԲԸ-ի կողմից Կարճաղբյուր համայնքում տեղակայված մանրաձկան գործարանից բաց է թողնվել «Ամառային իշխան» ենթատեսակի թվով՝ 87300 հատ մարածուկ՝ յուրաքանչյուրը 10 գրամ միջին զանգվածով, ընդամենը 873 կգ:

Մանրաձկների բացթողումը իրականացվել է Կարճաղբյուր համայնքին հարող Սևանա լճի ջրային տարածքում: Բացթողնված վայրերի տարածքներում սահմանվել է շուրջօրյա հերթապահություն մանրաձկների բնական հարմարվողականությունը ապահովվելու համար:

2024թ-ի հունիսի 24-ին «Գեղարքունի» ենթատեսակի թվով 2000 հատ մանրաձուկ՝ յուրաքանչյուրը 33 գրամ միջին զանգվածով, ընդամենը 66 կգ բաց է թողնվել փոքր Սևանում՝ Ծովագյուղ-Սևան-Դիլիջան մայրուղու 1,5 կմ 1 1501 հասցեից:

Արդյունագործական ձկնորսություն

ՇՄՆ-ի հետ կնքված պայմանագրերով 2024 թվականի **ապրիլի 01-ից մինչև հուլիսի 01-ը ընկած** ժամանակահատվածում 9 կազմակերպությունների կողմից Սևանա լճում արդյունագործական նպատակով իրականացվել է ձկան որս մուտքի 25 կետերից, որի ընթացքում որսվել է ընդհանուր **136 390** կգ սիգ տեսակի ձուկ:

«Սևան» **ազգային պարկ» ՊՈԱԿ-ի** և շրջակա միջավայրի նախարարության միջև կնքված պայմագրով 306 ձկնորսի կողմից 2024 թվականի **ապրիլի 01-ից մինչև հուլիսի 01-ը** ընկած ժամանակահատվածում որսվել է **80 080** կգ սիգ տեսակի ձուկ:

Սևանա լճում արդյունագործական նպատակով 2024թ. ձկան որսաշրջանը սկսվելուց մինչև հուլիսի 1-ը ընկած ժամանակահատվածում 9 կազմակերպությունների կողմից 539 ձկնորսի կողմից մուտքի 25 կետերից, որսվել է ընդհանուր **152651** կգ սիգ տեսակի ձուկ, որը «Սևան» **ազգային պարկ» ՊՈԱԿ-ի** և շրջակա միջավայրի նախարարության միջև կնքված պայմագրով 306 ձկնորսի կողմից որսվել է **87 746** կգ սիգ տեսակի ձուկ:

Կադաստրի վարում և հողաշինարարություն.

ՊՈԱԿ-ի հողաշինարարի կողմից՝ ՇՄՆ-ի և ՊՈԱԿ-ի միջև 2024թ. հունվարի 18-ին կնքված ՇՄՆ-ԴՇ-24/03 պայմանագրով նախատեսված Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքներն իրականացնելու Դրախտիկ տեղամասի

5,6,7,8,9,10,11 քառակուսիներում ավարտվել են նշահարման և ծառերի համարակալման աշխատանքները՝ ընթանում են հաշվեգնահատման աշխատանքներ:

ՊՈԱԿ-ի տնօրենի մի շարք հրամանների համաձայն հողաշինարարը մասնակցել է մի շարք գնահատման հայտերի հանրային քննարկումների:

Կազմվել են 99 պայմանագրեր, որից 23-ը՝ խոտհունձի, 26-ը՝ փեթակների տեղադրման, 40-ը՝ անասունների արածեցման, որոնց կնքման համար կազմվել են տեղադիրքի քարտեզներ:

Պարկի տարածքում անտառտնտեսական աշխատանքներ.

Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի և «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև կնքված 2024թ. հունվարի 18-ին կնքված պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին N°ՇՄՆ-ԴՇ-24/03 պայմանագրի համաձայն՝ «Սևան» ազգային պարկի Դրախտիկ տեղամասում՝ ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքներում անտառտնկարկների մաքրման նպատակով Դրախտիկ տեղամասի 1-ին պահաբաժնի 1,2,4,5 քառակուսիների համար համաձայն ՇՄՆ նախարարի 08.05.2024թ-ի N° Ն/16.11/4936 հանձնարարականի և «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի N°134-Լ հրամանի հիման վրա դուրս են գրվել N°000006, N°000007, N°000008 անտառհատման տոմսեր՝ համապատասխան ծավալներով: Նշված քառակուսիներում մաքրման աշխատանքները մոտենում են ավարտին և մաքրվել է շուրջ 10 հա տարածք, որը կատարողական ակտով կհանձնվի ՇՄՆ-ին: Նույն տեղամասի 5,6,7,8,9,10,11 քառակուսիներում ավարտվել են նշահարման և ծառերի համարակալման աշխատանքները՝ ընթանում են հաշվեգնահատման աշխատանքներ:

ՇՄՆ նախարարի 04.06.2024թ-ի N° Ն/16.11/5977 հանձնարարականի և «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի N°133-Լ հրամանի համաձայն Սևան տեղամասի 3,4,5,7 քառակուսիներում թվով 19 հատ քամապատալ եղած սոճի տեսակի ծառերը հատելու նպատակով 2024 թվականի հունիսի 4-ին դուրս է գրվել N°000009 անտառհատման տոմսը:

ՇՄՆ նախարարի 03.05.2024թ-ի N° Ն/16.11/4608 հանձնարարականի և «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի 07.05.2024թ. N°108-Լ հրամանի համաձայն Մարտունու և Վարդենիկ տեղամասերում քամատապալ եղած թվով 10 հատ բարդի տեսակի ծառերը հատելու նպատակով դուրս են գրվել N°000002, N°000003, N°000004, N°000004 անտառհատման տոմսերը:

Հաշվի առնելով 2024 թվականի փետրվարի 9-ին ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի կողմից տրված եզրակացությունը (ըստ որի պարկի անտառաձածկ տարածքներում կարանտին տեսակի միջատներ և վնասատուներ չեն հայտնաբերվել) և ղեկավարվելով Շրջակա միջավայրի նախարարի կողմից 2020թ.-ի մայիսի 14-ի N140-Լ հրամանով հաստատված «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կանոնադրության 43-րդ կետի 8-րդ ենթակետով և հիմք ընդունելով «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գլխավոր անտառագետի 2024թ-ի հունիսի 06-ի զեկուցագիրը և ՊՈԱԿ-ի տնօրենի 2024թ հունիսի 7-ի N°19-1837 հանձնարարականի համաձայն «Սևան» ազգային պարկի անտառաձածկ տարածքներում ՊՈԱԿ-ի համապատասխան աշխատակիցների կողմից սկսվել են ձյունակոտոր, քամատապալ, ցցաչոր և հիվանդություններով վարակված ծառերի համարակալման և հաշվեգնահատման աշխատանքները՝ պարկի անտառներում սանիտարական վիճակը բարելավելու նպատակով առաջիկայում կսկսվեն անտառպրոցիակական ուսումնասիրություններ:

2024թ-ի մայիս ամսին «Սևան» ազգային պարկի Վարդենիսի տարածքի Արեգունի տեղամասի 3-րդ պահաբաժնի 34-րդ քառակուսում շուրջ 5 հա մակերեսով տարածքի վրա

իրականացվել է 10.000 հատ տնկիներով ծառատնկման աշխատանքներ, որից 3000 հատ բարդի, 4000 հատ հացի, 3000 հատ դեղին ակացիա: Ծառատնկման աշխատանքները իրականացվել է ՍԱՊ-ԳՀԾԲ-24/05 ծածկագրով մրցույթի արդյունքներով՝ 03.05.2024թ. կնքված պայմանագրով, Վախթանգ Հակոբյան Սամվելի Ա/Ձ կողմից:

2024թ-ի մայիս ամսին Մարտունու տեղամասում գտնվող տնկարանում տնկվել է 18 հազար հատ բարդի և 2 հազար հատ ուռի տեսակի կտրոններ: Իրականացվում է նշված կտրոնների խնամքի աշխատանքներ (խոտհունձ և ոռոգում):

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի 2024թ-ի մայիսի 15-ի № 117-Լ հրամանի համաձայն «Սևան» ազգային պարկի պահաբաժիններում մայիս և հունիս ամիսներին իրականացվել են գարնանային հերթական և վերահսկողական ստուգումներ: Արդյունքները քննարկվել են ստուգումն իրականացնող աշխատանքային խմբի անդամների կողմից կազմվել է ամփոփ տեղեկագիր և ներկայացվել է ՇՄՆ:

«Սևան» ազգային պարկի տարածքին սահմանակից համայնքների բնակչության շրջանում բացատրական աշխատանքների իրականացում, այցելուների կենտրոնի և տարածքի այցելուներին տեղակատվության տրամադրում.

ՊՈԱԿ-ի գործունեության առավել կարևոր մանրամասների վերաբերյալ սահմանակից համայնքների բնակչությունը և հանրությունը իրազեկվել է ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքէջից:

ՊՈԱԿ-ի Այցելուների կենտրոնը կազմակերպել է հետևյալ միջոցառումները՝ «Նահանջ տարի» սեմինար-քննարկում, Թանգարանների միջազգային օր՝ Հ. Իգիթյան անվան Գեղարվեստական կենտրոնի Սևանի մասնաճյուղի սաների աշխատանքների ցուցահանդես, «Կարմիր գիրք» ֆիլմի դիտում-քննարկում, «Ճահճային թռչուններ» թեմայով ուսուցողական դասընթաց՝ Կենսաբազմազանության միջազգային օրվան նվիրված, «Բեզարյան այծ» էքսկուրսիա թանգարանում, շրջակա միջավայրի համաաշխարհային օր՝ «Մեր էկոլոգիան» թեմայով սեմինար:

ՊՈԱԿ-ի Այցելուների կենտրոն է այցելել 1430 այցելու, որոնցից 508-ը մասնակցել են վերոնշյալ միջոցառումներին:

2. Ընդհանուր բաժին.

ՊՈԱԿ է ստացվել 806 գրություն, որից 141-ը՝ շրջակա միջավայրի նախարարությունից, 664-ը՝ այլ իարավաբանական և ֆիզիկական անձանցից: Նշված գրությունները Գործավարության կարգին համապատասխան ժամանակին և պատշաճ ձևով մուտքագրվել են գրանցամատյաններում, այնուհետև հանձնվել են տնօրենին՝ մակագրության: Մակագրված գրությունները պատճենահանվել են և հանձնվել են համապատասխան բաժիններ: Իրականացվել է հսկողություն դրանց՝ սահմանված ժամկետներում պատասխանելու ուղղությամբ: Ելքագրվել է 1115 գրություն, որից 98-ը՝ շրջակա միջավայրի նախարարություն:

Աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով պատրաստվել են տարաբնույթ դիմումներ և գրություններ:

Մարդկային ռեսուրսների կառավարում. Կազմվել է 67 անհատական/ներքին իրավական ակտեր, որից՝ 3-ը աշխատանքային պայմանագիրը լուծելու, 7-ը խրախուսելու, 1-ը չվճարվող արձակուրդ տրամադրելու, 1-ը մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդ, 20-ը ամենամյա նվազագույն արձակուրդ տրամադրելու, 23-ը աշխատողին գործուղելու, 12-ը այլ ներքին իրավական ակտերի վերաբերյալ:

ՊՈԱԿ-ում աշխատանքի է ընդունվել 16 մարդ, աշխատանքից ազատվել է 2 մարդ:

Իրավաբան. Պայմանագրերով սահմանված վարձավճարներն ուշացնելու համար 8 ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, որոնց ընդհանուր պարտքը 14240760 ՀՀ դրամ է, ներկայացվել են պայմանագրերը միակողմանի վաղաժամկետ լուծման առաջարկներ: Լուծման առաջարկների արդյունքում ՊՈԱԿ է մուտքագրվել 2947676 դրամ վարձավճար:

ՀՀ ինտերնետով ծանուցման պաշտոնական կայքում հրապարակվել են 36 ծանուցումներ, որից 32-ը՝ կադաստրային արժեքների փոփոխության, 4-ը՝ պայմանագրերը միակողմանի վաղաժամկետ լուծման վերաբերյալ:

Կազմվել են 205 ծանուցումներ, որից 117-ը՝ սանիտարական կանոնների (աղբահանությունը) պահպանության, լողափի շահագործումն առանց փրկարարական, բուժսպասարկման ծառայությունների և լողանշանների առկայության բացառման, 87-ը՝ կադաստրային արժեքների բարձրացման հետ կապված վարձավճարների փոփոխման, 1-ը՝ մասնավորեցման արդյունքում պարկի տարածքում ձեռք բերված անշարժ գույքով ծանրաբեռնված հողամասի վարձավճար վճարելու վերաբերյալ:

ՀՀ Վերաքննիչ դատարան է ներկայացվել 1 վերաքննիչ բողոքի պատասխան:

Կազմվել են շուրջ 80 գրություններ և գրությունների/դիմումների պատասխաններ:

ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ են ներկայացվել՝

- 1) 6 էլեկտրոնային հայցադիմում, ընդհանուր՝ 2724070 ՀՀ դրամ հայցագնով, որից 2-ը գումարի բռնագանձման, իսկ 4-ը գումարի բռնագանձման և պայմանագրի լուծման պահանջներով:
- 2) 10 դիմում կատարողական թերթը հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ներկայացնելու և վճռի օրինական ուժ ստանալու փաստը 2-րդ կնիքով հաստատելու մասին:
- 3) 5 քաղաքացիական գործով ապացույց:

Դատարանի վճռով հօգուտ ՊՈԱԿ-ի բավարարվել են 8 հայցադիմումներ, ընդհանուր՝ 3537514 դրամի պահանջով, որից 6-ը նաև պայմանագիրը միակողմանի վաղաժամկետ լուծման պահանջով, կարճվել են 3 քաղաքացիական գործերի վարույթներ:

ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված հայցադիմումների հիման վրա ՀՀ ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարաններում քննվում են 32 քաղաքացիական գործ, որից 13-ը՝ գումարի բռնագանձման և պայմանագրի լուծման, 1-ը՝ պայմանագրի լուծման, 18-ը՝ գումարի բռնագանձման պահանջներով, ընդհանուր՝ 18 345188 հայցագնով:

Կազմվել են 99 պայմանագրեր, որից 23-ը՝ խոտհունձի, 26-ը՝ փեթակների տեղադրման, 40-ը՝ անասունների արածեցման, 6-ը՝ պառկելաթախտերի և/կամ աղբարկղերի վարձակալության, 1-ը՝ հանգստի և զբոսաշրջության հետ կապված սպասարկման ծառայությունների մատուցման, 3-ը՝ հանրային լողափերի կահավորման, բարեկարգման և սպասարկման:

Իրավաբանը մասնակցել է 10 քաղաքացիական գործերով դատական նիստերի:

Մշակվել և «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի խորհրդի կողմից հաստատվել է «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի «Արտանիշ» արգելոցի կանոնակարգը և մուտքավճարի կարգը:

3. Ֆինանսահաշվապահական բաժին.

Համաձայն շրջակա միջավայրի նախարարության և ՊՈԱԿ-ի միջև 2024թ հունվարի 18-ին կնքված N ՇՄՆ-ԴՇ-24/03 պայմանագրի՝ պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման և Սևանա լճի ջրածածկ անտառտնտեսարկների մաքրման ծառայությունների համար որպես դրամաշնորհ ՊՈԱԿ-ին տրամադրվել է 73,947.2 հազար ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ), որից 20 649.4 հազար ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) ծախսվել է Սևանա լճի ջրածածկման ենթակա անտառտնտեսարկների մաքրման աշխատանքների վրա, 22 879.3 հազար ՀՀ դրամ ուղղվել է

ՊՈԱԿ-ի աշխատակիցների աշխատավայրի վարձատրությանը, իսկ 30 418.5 հազար ՀՀ դրամը չի ծախսվել և ՊՈԱԿ-ի հաշվեհամարում է:

Գանձումներ. Պարբերաբար վարձակալները հեռախոսազանգով տեղեկացվել են իրենց վարձավճարների մասին, կազմվել են շուրջ 564 ծանուցումներ՝ «Պետական սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալության և/կամ կառուցապատման իրավունքի տրամադրման մասին» իրավաբանական կամ ֆիզիկական անձանց միջև կնքված պայմանագրերով նախատեսված վարձավճարների վերաբերյալ, որի արդյունքում հողի վարձավճարներից մուտքը կազմել է 64,581.4 հազար ՀՀ դրամ:

Գնումներ. ՊՈԱԿ-ի կարիքների համար ապրանքներ և ծառայություններ ձեռք բերելու նպատակով կազմակերպվել են 13 ընթացակարգ, որից՝ 9-ը մեկ անձ, 4-ը՝ գնանշման հարցում: Կազմակերպված ընթացակարգերի արդյունքում կնքվել են 10 պայմանագրեր:

4.Տնտեսական սպասարկման բաժին.

Ստորաբաժանումներին տրամադրվել է դիզելային վառելիք, բենզին, գազ, տնտեսական ապրանքներ և գրենական ապրանքներ:

Իրականացվել է շենք-շինությունների և հարակից տարածքների մաքրման աշխատանքներ:

Իրականացվել է ավտոտրանսպորտի աշխատանքի, վառելիքի և քսայուղերի շարժի հաշվառում:

«Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետների հետ համատեղ անցկացվել է ավտոմեքենաների ջրային տեխնիկայի գույքագրում և նրանց տեխնիկական վիճակի մանրազննին ուսումնասիրում, անցկացվել է ավտոմեքենաների տեխնիկական զննում և կնքվել է ԱՊՊԱ պայմանագրեր:

Ապահովվել է խմելու ջրի, բնական գազի և էլեկտրաէներգիայի սպառման սարքավորումների անխափան աշխատանքը:

Տրանսպորտային միջոցների մասին կազմվել են թերությունների ակտեր, տեխնիկական բնութագրեր և ներկայացվել է համապատասխան գնման ընթացակարգեր կազմակերպելու համար:

Հանրային լողափերին և վարձակալերին տրամադրվել է պայմանագրային հիմունքներով, ադրամաններ և պարկելաթոռներ:

**«Սևան» ազգային պարկ»
ՊՈԱԿ-ի տնօրեն**

Կ. Մնացականյան

/ստորագրություն/